Արձանագրություն N 3

«ԵՔ-ԲՄԱՇՁԲ-20/35 ծածկագրով գնման ընթացակարգին հանձնաժողովի նիստի

20. 03. 2020թ.
Ժամ 10:00

Մասնակցում էին
Հանձնաժողովի նախագահ՝ Վ. Գուլգուլյան
Հանձնաժողովի անդամներ՝ Ա. Սաֆարյան /ԲԱ/, Ե. Բաղդասարյան /ԳԱ/,
Ե. Մատասյան/ԲԱ/, Ա. Մարգարյան /ԳԱ/
Հանձնաժողովի քարտուղար՝ Գ, Հուրոյան

1.Տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության և սահմանված պահանջներին դրանց համապատասխանության մասին

(Վ. Գուլգուլյան)

1.1 Մասնակիցների կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք համապատասխանում են հրավերով սահմանված պայմաններին, բացառությամբ «ԷՄՕՇԻՆ» ՍՊԸ -ի, «Արարատշին» ՍՊԸ –ի, «Ժիլյո» Ա/Կ» -ի, և «Էլդոգար» ՍՊԸ-ի հայտերի:

-- «ԷՄՕՇԻՆ» ՍՊԸ –ի և «Էլդոգար» ՍՊԸ կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը /սարքերի և սարքավորումների նկարագիրը / լրացված է սխալ՝ անհրաժեշտ է ներկայացնել ծավալաթեթ –նախահաշվով նախատեսնված բոլոր սարքերին և սարքավորումներին վերաբերող տվյալները:

--- «Արարատշին» ՍՊԸ-ի հայտում բացակայում է հայտի ապահովումը

-- «Ժիլյո» Ա/Կ-ի կողմից ներկայացված թիվ 1.1 հավելվածը /սարքերի և սարքավորումների նկարագիրը/ լրացված է սխալ՝ անհրաժեշտ է ներկայացնել ծավալաթեթ –նախահաշվով նախատեսնված բոլոր սարքերի և սարքավորումների նկարագիրը, ծավալաթեթ –նախահաշվում կա թվաբանական անճշտություններ, ինչպես նաև հայտի ապահովման բանկային երաշխիքը պետք է վավեր լինի հայտը ներկայացվելու օրվանից հաշված 90 (իննսուն) աշխատանքային օր :

1.2 ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 41-րդ կետի համաձայն, Գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը կասեցնել մեկ օրով և համակարգի միջոցով ծանուցել մասնակցին՝ (մասնակցին ծանուցելու պահից հաշված) առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել նշված անհամապատասխանությունը: Անհամապատասխանությունը շտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի բավարար, հակառակ դեպքում կմերժվի:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 5, դեմ - 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման մասին

(Վ. Գուլգուլյան)

2.1 Գնահատող հանձնաժողովի նիստը հրավիրել Մասնակիցների կողմից անհամապատասխանության փաստաթղթերը ներկայացնելու կամ չներկայացնելու օրվան հաջորդ աշխատանքային օրվա ժամը 10:00-ին, Երևանի քաղաքապետարանի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Արգիշտիի փողոց 1 հասցեում

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի		
Նախագահ՝		Վ. Գուլգուլյան
Անդամներ՝		Ա. Սաֆարյան
		Ե. Բաղդասարյան
		Ե. Մատասյան
		Ա. Մարգարյան
Քարտուղար՝		Գ. Հուրոյան